ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

15 մարտի 2011թ. **N—Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԵՆԳԱՎԻԹ-ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. «Շենգավիթ համայնքի «Շենգավիթ-Մաքրություն» և «Ավան համայնքի «Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունները վերանվանել համապատասխանաբար «Շենգավիթ-կանաչապատում» և «Ավան-կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունների:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել կազմակերպությունների ֆիրմային անվանումների պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթների և ձևակերպումների իրականացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԵՆԳԱՎԻԹ-ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Շենգավիթ համայնքի «Շենգավիթ-Մաքրություն» և «Ավան համայնքի «Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունները վերանվանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԵՆԳԱՎԻԹ-ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Շենգավիթ համայնքի «Շենգավիթ-Մաքրություն» և «Ավան համայնքի «Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունները վերանվանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԵՆԳԱՎԻԹ-ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Երևանի թաղային համայնքները վերակազմակերպվել են Երևան համայնքի, իսկ նույն օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Երևանի թաղային համայնքների սեփականությունը համարվող գույքը սեփականության իրավունքով փոխանցվել է Երևանին և Երևանը համարվում է Երևան քաղաքի թաղային համայնքների իրավահաջորդը։

Երևան քաղաքի Շենգավիթ թաղային համայնքի կողմից հիմնադրված «Շենգավիթ-մաքրություն» և Ավան համայնքի կողմից հիմնադրված «Կանաչապատում» ՓԲԸ-ների ֆիրմային անվանումների մեջ օգտագործվել է համապատասխանաբար «Շենգավիթ համայնք» և «Ավան համայնք» բառերը, հետևաբար առաջացել է անհրաժեշտություն անվանափոխել և հետագայում կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատել։

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը՝ ավագանու քննարկմանն է ներկայացվում «Շենգավիթ համայնքի «Շենգավիթ-Մաքրություն» և «Ավան համայնքի «Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունները վերանվանելու մասին» որոշման նախագիծը։

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ